12 JUN 2013

APR 2011

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1–12 ՅՈՒՆՈՒԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ՃԲ. ՏԱՐԻ 1988

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

Հ. Գր. Գալէմքեարեանն իր «Պատմութիւն հայ լրագրութեան» աշխատութեան մէջ գրում է. «Մեր լրագրութեան պատմութեան մէջ սակաւաւոր են այն լրագիրներն, որ երկայն եւ միանդամայն պատուաւոր ապրած ըլլան»[1]: Նոյն միտքը վերաբերում է հայերէն գեղարուեստական կամ հայագիտական հանդէսների, բացառութեամբ 1843-ին ծնունդ առած ու դեռ կենդանի բանասիրական-գեղարուեստական «Բազմավէպ», ինչպէս նաեւ 1887-ին սկզբնաւորուած եւ յարատեւող «Հանդէս ամսօրեայ» (այսուհետեւ ՀԱ) բանասիրական հանդէսներին, առանց որոնց թերի կը լինէր Մխիթարեան զոյգ Միաբանութիւնների մշակութային գործունէութեան պատկերացումը: Պատասխանատուների նիւթական եւ բարոյական մեծ զոհողութիւնների եւ անդուլ գործունէութեան, հայ եւ օտար հայագէտների համերաշխ ու բարեբար աշխատակցութեամբ երկու հանդէսները Երեւանի «Պատմա-բանասիրական հանդէս»-ի հետ վայելում են միջազգային ճանաչում, եւ երանի այն գրադարաններին, որոնք ունեն հայագիտութեան այդ թանկագին գանձարանները:

ՀԱ-ն հարիւրամեայ, բայց հասուն երիտասարդ է եւ կը յարատեւի այնքան, որ դեռ կ'ապրի – եւ ապրելու է – Վիեննայի Մխիթարեան երախտաշատ Միաբանութիւնը, որի պաշտօնական հանդէսն է: Միւս ազնիւ միջոցների հետ, ինչպիսին են Մխիթարեան քոյր Միաբանութիւնների աշխարհատարած հայկական դպրոցները, հրատարակութիւնները, Հայրերի անձնուէր, անշահախնդիր եւ անփոխարինելի գործունէութիւնը, «Բազմավէպ»-ն ու ՀԱ-ն իւրովի բարձր մակարդակով մասնակցում են Մխիթար Աբբահօր եւ նրա մեղուաջան աշակերտների մշակութային ազգանուէր նպատակների իրագործման. այն է՝ հայազգի մատաղ սերունդների մէջ ամենուրեք սերմանել հայկական եւ իրենց ապրած երկրների գիտութիւնն ու լեզուն, ջամբել հայեցի եւ բարոյական դաստիարակութիւն, Հային տալ ինքնաճանաչման զգացում, հայ ժողովրդի հոգեւոր արգասիքները ճանաչել տալ բոլորին, հայ եւ օտար մասնագէտներին եւ բոլոր հետաքրքրուողներին հաղորդել հայագիտութեան բոլոր բնագաւառների նուաճումները, ժամանակի պահանջներին զուգընթաց, առանց ետ մնալու միւս առաջաւոր ազգերից. չ՞է որ հայ ժողովուրդը պահպանում է իր հնդեւրոպական ծագումը:

Թէեւ ՀԱ-ի հրատարակիչները հայ են, բայց կաթողիկէ վարդապետներ – յիշենք անցեալի իրարամերժ եւ անհանդուրժողական կրօնական պայքարներն ու հալածանքները – սակայն նրա էջերում երբեք չեն երեւացել զուտ կրօնա-բարոյական, քարոզչական, նուազ եւս՝ պարակտիչ, անօգուտ, լոկ բանակռուական բնոյթի կրքոտ յօդուածներ կամ ակնարկումներ: Այդ է պատճառներից մէկը, որ ՀԱ-ն ազատ եւ խաղաղօրէն ներթափանցել է հայ ուսումնասէր մարդկանց տները, հայկական դպրոցների գրադարանները, հայերէն թերթերի եւ հանդէսների խմբագրատները. գիտակներից կարդացուել է, սիրուել, եթէ չի սիրուել, ապա գէթ յարգուել է, մերթ քննադատուել է շինիչ, երբեմն էլ անբարեացակամ ոգով, սակայն շատ աւելի յաճախ գովասանքի է արժանացել: Իր գիտականութեամբ ու լրջութեամբ առինքնել է հոգեւորական եւ աշխարհիկ, հայ եւ օտարազգի աշխատակիցներ, յարուցել է տաղանդներ, հրատարակել ծանրակշիռ ուսումնասիրութիւններ, որոնք դժուար թէ

[1] ՀԱ, 1888, էջ 58բ:

© National Library of Armenia

հայկական պայմաններում այլ կերպ լոյս տեսէին յօդուածների, գրքոյկների կամ գրքերի ձեւով: Բանասիրութիւնը շատերի համար չոր ու ցամաք գիտութիւն է:

ՀԱ-ն հայագիտութեան մի անդաստան է, ուր խաղաղօրէն իրար են հանդիպել եւ հայ մշակոյթի վերաբերեալ գիտական մտքեր են փոխանակել, որոնք առաջընթաց են բերել հայ բանասիրութեան, հին ու նոր գրականութեան, ազգագրութեան, լեզուաբանութեան, ձեռագրագիտութեան, աշխարհագրութեան, հին պատմութեան եւ հայագիտութեան այլ ճիւղերին:

ՀԱ-ն գոյատեւում է մի շարք հանգամանքների շնորհիւ: Դրանցից է այն, որ նրա Մխիթարեան տէրերը ազնիւ են, անշահախնդիր, փառաւոր, բայց ոչ փառամոլ, անկախ, իրենց կամ ուրիշների մարդկային բնական կրքերի կամ բախտի բերումների թէթեւ խաղալիքները չեն դարձել եւ չեն դառնայ, իրենց ուղիղ, ուղղամիտ ու հաշտ գործունէութեամբ վայելել են ու վայելում բոլորի համակրանքը, աշխատակցութիւնը ՀԱ-ում եւ մանաւանդ Աւստրիայի հիւրընկալ հովանաւորութիւնը եւ ապահովութիւնը, որը նրանց սիրայօժար թոյլ տուեց Տրիեստից յետոյ հաստատուելու մայրաքաղաք Վիեննայում 1811 թ.: Անցեալում ոչ ոք նիւթապէս չի սատարել ՀԱ-ին, որն այսօր մասնակի փոքր նպաստ է ստանում միայն Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնից: Վերջին տարիներս նա լոյս է տեսնում տարեգրքի յաճախականութեամբ, սակայն ստուարածաւալ:

ՀԱ-Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՈՒ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Վիեննական Մխիթարեանները միշտ էլ գիտակցել են, որ մամուլը դաստիարակման մի մեծ միջոց է: Ուստի ՀԱ-ից առաջ փորձել են դրանով էլ օգտակար լինել Հայերին: ՀԱ-ից առաջ հրատարակել են «Ծանօթութիւնք վաճառականութեան» 1819-ին, որ հայ ոչ գերմանախօս առեւտրականներին պիտի ծանօթացնէր վաճառականական հարցերը Աւստրիայում եւ յատկապէս Վիեննայում. թերթն առաջին համարից յետոյ դադարում է առյաւէտ: Երկրորդ փորձը «Եւրոպա» շաբաթաթերթն է, որ լոյս է տեսել 1847–1854 թթ. եւ եղել քաղաքական, տնտեսագիտական, բանասիրական, գեղարուեստական բնոյթի: 1858-ից դարձել է երկշաբաթաթերթ եւ փոքրադիր, ընտանեկան եւ գեղարուեստական թեքումով, «Օրագիր ընտանեկան». դադարում է 1863-ի վերջում, Մխիթարեաններից անկախ մի շարք պատճառներով: Դրան աշխատակցել են ՀՀ. Յովսէփ Գաթրճեանը, Փիլիպպոս Ճամճեանը, Արսէն Այտնեանը, Պօղոս եւ Ղեւոնդ Յովնանեան եղբայրները եւ ուրիշ Մխիթարեաններ: Դրանում մշակուել է արեւմտահայերէնը, եւ յօրինուել են նորանոր բառեր, որոնցից շատերը մտել են բառապաշարի մէջ[2]:

Մխիթարեանները հրատարակել են նաեւ օրացոյցներ, բայց ոչինչ չէր կարող փոխարինել հայագիտական մի մեծ հանդէսի, որպիսին պիտի լինէր ՀԱ-ն:

ՀԱ-Ի ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ

1886-ին Միաբանութեան ընդհանուր Աբբահայր է ընտրւում հանրածանօթ Հ. Արսէն Այտնեանը, որ 1887-ին ձեռնադրւում է արքեպիսկոպոս: Որքան գիտնական եւ հռչակաւոր, «Աշխարհաբարի քննական քերականութիւն» անմահ աշխատութեան հեղինակ, եղել է նոյնքան էլ ձեռներէց եւ գործունեայ առաջնորդ: Քչերին է յայտնի, որ նա եղել է նաեւ գեղարուեստասէր, ճաշակի մարդ եւ հայերէն զանազան տպագրատառերի հեղինակ: Նրա իմաստուն ղեկավարութեան օրով Միաբանութիւնը 1886-ին ձեռնարկում է մի «ուսումնաթերթի» հրատարակութեան (իսկ 1889-ին եռ է գնում Մխիթարեան տպարանը, որ հարկադրուած վաճառուել էր 1870 դժուարին տարին): Հ. Գաբրիէլ Մէնէվիշեանի «"Հանդէս ամսօրեայի" կեանքը» յօդուածը ցոյց է տալիս, որ երիտասարդներին հեշտ չի եղել համոզել երիցագոյններին, որոնք շատ աւելի փորձառու եւ զգուշաւոր էին[3]: Սակայն բոլորն էլ գիտակցել են, որ Միաբանութիւնը չէր կարող լուռ մնալ եւրոպական գիտութիւնների զարգացման առաջ եւ կամ միայն գրքերով ծանօթացնել Հայերին գիտական նորութիւնները

2 Հ. Գր. Գալէմքեարեանն իր «Պատմութիւն հայ լրագրութեան» գրքում ցանկագրել է «Եւրոպա» շաբաթաթերթի «ազգային ընդարձակ յօդուածները» (տե՛ս, օրինակ՝ ՀԱ, 1888, էջ 216–218):

3 Տե՛ս «Յուշարձան...», Վիեննա, 1911, էջ 57–64:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм ССР
607-89

կեանքի բոլոր բնագաւառներում, ոչ էլ լռել հայ ժողովրդի երկրի, պատմութեան, լեզուի եւ մշակոյթի մասին:

Աբբահօր գլխաւորութեամբ որոշւում է, որ ապագայ պարբերականը պիտի կոչուէր «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» եւ պիտի ունենար «բարոյական, ուսումնական, արուեստագիտական» (իմ՛ա արուեստագիտական եւ արհեստագիտական) բնոյթ: Ամսաթերթի ձեւով լոյս տեսնելու պատճառը կարելի է գտնել ՀԱ-ի բեղմնաւոր աշխատակից Հ. Գր. Գալէմքեարեանի հետեւեալ տողերում, գրուած Սիմէոն Գուլամիրեանցի խմբագրած ու հրատարակած «Արաքս» հանդէսի (Պետերբուրգ) 1887-ի առաջին գրքի գրախօսութեան մէջ. «Կարելի չէ՞ր արդեօք փոխանակ մէկ անգամէն 12 թերթ (12 անգամ 16 էջ. Մ. Մ.) հրատարակելու եւ վեց ամիս կամ աւելի միջոց սպասցնելու՝ քիչ միջոցի մէջ քիչ բան հրատարակել, եւ թերթին ազդեցութիւնը միշտ վառ պահել»[4]: Անշուշտ այս մտահոգութիւնն ունէին նաեւ Մխիթարեանները:

ՀԱ-ի առաջին խմբագրութեան անդամները եղել են հետեւեալ Հայրերը. Ղեւոնդ Վ. Յովնանեան (խմբագրապետ), Յովհ. Վ. Թումայեան, Գր. Գալէմքեարեան եւ որպէս օգնական Գաբրիէլ Մէնէվիշեան, որոնք միաժամանակ առաջին յօդուածագիրներն են Հ. Յակոբոս Տաշեանի հետ իրենց եռանդուն աշխատակցութեամբ: 1886-ի նոյեմբերին տպագրութեան է յանձնւում եւ դեկտեմբերին լոյս տեսնում «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ բարոյական, ուսումնական, արուեստագիտական» պարբերականի փորձնական առաջին պրակը, 16 մեծադիր էջ, որ հաւանաբար համարուեց 1887-ի՝ հիմնադրման տարուայ, առաջին ամսուայ համարը: Նա իր յաջորդներն ունի առ այսօր, եթէ ոչ ամէն ամիս, գէթ ամէն տարի մի հատորի մէջ մէկտեղուած, ուրախութիւն, գոհունակութիւն եւ գիտութիւն բերելով բոլորիս: ՀԱ-ն համաշխարհային երկու ահաւոր պատերազմ է ապրել, սակայն նոյնիսկ այդ դժնդակ տարիներին չի դադարել, որպէս խորհրդանիշ լոյս է տեսել միացեալ թուերով ու տարիներով, պահելով ամէն տարուայ հատորի հերթականութիւնը:

Որեւէ հրատարակութիւն ընթերցողներից գնահատւում է իր ձեւաւորման եւ բովանդակութեան տեսակէտից: ՀԱ-ի երկարակեցութեան եւ բեղմնաւորութեան գաղտնիքներից մէկն էլ այն է, որ նա կարողացել է յառաջադիմել, ժամանակի պահանջներին համեմատ բարեփոխուել ձեւով, առաւել եւս բովանդակութեամբ: Նրա յաջորդական խմբագրութիւնները, որոնք միշտ Մխիթարեան վարդապետներ են եղել, յաջողութեամբ գործադրել են այդ երկու սկզբունքները, ունկնդրելով ընթերցողների դիտողութիւնները, սակայն անսայթաք ընթանալով իրենց ընտրած ուղիով եւ երբեք չձգտելով հաճելի լինել սրան կամ նրան առանձնապէս. արդարեւ շատեր իրենց նամակներում զանազան առաջարկներ են արել, որպէսզի հանդէսը «դուր գայ» բոլորին, մի բան, որ հնարաւոր չէր եւ չէ:

ՀԱ-Ի ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

ՀԱ-ն մինչեւ 1914 թ. պրակ առ պրակ լոյս է տեսել ամէն ամսուայ սկիզբը, եւ տարուայ վերջում խմբագրութիւնը հրատարակուած համարները հաւաքել է մի հատորի մէջ, առանց կազմելու, այլ միայն մի կողք անցկացնելով, կռնակին տպագրելով անունը եւ տարեթիւը: Սկզբում դրուած է ամբողջ տարում հրապարակուած նիւթերի ցանկը: 1986 թ. հատորի թիւն է Ճ տարի, այն է՝ 100-րդ տարի, մի դա՛ր: Նորագոյն ժամանակներում հատորները համարակալուած են նաեւ հռոմէական թուանշաններով:

ՀԱ-ի արտաքին չափերը մնացել են նոյնը՝ 31,5 եւ 22,5 սմ:

Կողքերը ժամանակի ճաշակի համեմատ ենթարկուել են փոփոխութիւնների: 1887–1889 թթ. կողքերը կապոյտ հասարակ թղթից են, առանց զարդարանքի, ուր միայն կարդացւում են տարին, հանդէսի անունը, հրատարակութեան քաղաքն ու տպարանը՝ «1887, ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ բարոյական, ուսումնական, արուեստագիտական, Առաջին տարի, Վիեննա, Մխիթարեան տպարան»[5]: 1890–1914 թթ. կողքերը աւելի հաստատուն թղթից են, ընթերցողներին ծանօթ

4 ՀԱ, 1888, էջ 65ա:

5 ՀԱ-ի բոլոր հատորները, առաջինը մանրաժապաւէնով, դեռեւս տրամադրելի են Վիեննայի Մխիթարեան գրավաճառանոցում:

© National Library of Armenia

սիրուն եւ գունաւոր նկարազարդմամբ։ 1920-ից յետոյ դրանք հաստ սովորական գունաւոր թղթից են, այժմ՝ դեղին եւ բովանդակութեան ցանկով։ Նորագոյն ժամանակներում հանդէսի անունը եւ հրատարակչական միւս տեղեկութիւնները կողքի վրայ տպագրւում են նաեւ գերմաներէն։

Թուղթը, տառատեսակները, տպագրութիւնը, ներքին ձեւաւորումը միշտ էլ եղել են որակաւոր եւ ըստ այնմ արժանացել ընթերցողների եւ ժամանակի հայերէն միւս հանդէսների եւ թերթերի խմբագիրների գնահատանքին։ Մի գաղափար է տալիս խստապահանջ «Մշակ»-ի հետեւեալ գնահատականը, որի առաջին տողերը կարծէք մարգարէական են. «. . . Միակ ամսաթերթը, որ կարող կը լինի աջողութիւն ունենալ մեր մէջ, թէ իր դիրքով, թէ խմբագիրների եւ աշխատակիցների եռանդուն եւ միահոգի գործակցութեամբ եւ թէ վերջապէս իր ընտրած նպատակին ընտրելիութեամբ, — դա Հանդէսն է։ Փոքր նշանակութիւն չունի մի թերթի աջողութեան համար նաեւ մաքուր թուղթը եւ գեղեցիկ տպագրութիւնը։ Ոչ մի տեղ, որտեղ հայոց տպարաններ կան, այնքան կոկիկ, վայելուչ եւ ակնահաճոյ տպագրութիւն չկայ, որպէս Վիէննայի Մխիթարեանց տպարանում։ Ընթերցողը մեծ հաճութեամբ է բաց անում Հանդէսի էջերը եւ կարդում. . .»[6]։ Այս խօսքերն առաւել եւս ճիշտ են այսօր։

Էջերի համարակալումը. մեծադիր էջերը սովորաբար կիսուած են ուղղահայեաց գծով, բացի պաշտօնական գրութիւնների էջերից, որոնց տողերը էջի ամբողջ լայնքով են։ 1887–1910 թթ. էջերի երկու սիւնակները մէկ համար ունեն, իսկ այնուհետեւ, Հ. Ներսէս Ակինեանի խմբագրութեան օրով, երբ ՀԱ-ն շատ է բարելաւուել, սիւնակներն առանձին են համարակալուած, որ աւելի գործնական է ամէն տեսակէտից։ Տարեկան 12 համարները էջակալուած են մէկից անսահման։

Ամսական համարների ծաւալը 1887–1889 թթ. եղել է մեծադիր 16 էջ, այնուհետեւ սովորաբար 32։

Նկարազարդում. 1888-ից սկսած ՀԱ-ում երեւում են յաջող եւ յստակ պատկերներ, գծանկարներ, գծագրեր եւ լուսանկարներ, ըստ ժամանակի գիտական յաջողութիւնների։

Նիւթերի ամսական եւ տարեկան ցանկեր. ամսական համարների սկզբում դրուած է «Բովանդակութիւն»-ը։ Սկզբնական շրջանից երկար ժամանակ դրանում նշուած չեն յօդուածների էջերը եւ յօդուածագիրները, իսկ հատորների «Ցանկ նիւթոց»-ում էջերը տրուած են, բայց յօդուածագիրների կամ շարունակուող ուսումնասիրութիւնների հեղինակների անունները չկան։ 1910-ից վերանում են այս թերութիւնները։ Նկատելի է նաեւ, որ յօդուածագիր կամ հեղինակ Հայրերը յաճախ կա՛մ չեն ստորագրել, կա՛մ ստորագրել են սկզբնատառերով, ոմանք էլ կեղծանուններով, որոնք դժուարացնում են մատենագիտական աշխատանքները։ Այդ սովորութիւններն այժմ վերացել են, բարեբախտաբար։

ՀԱ-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Դժուար է բաւարար պատկերացնում տալ մի դարաւոր հանդէսի հրատարակած նիւթերի մասին։

Հանդէսների բովանդակութիւնը կախում ունի խմբագրութիւնների ընտրած ուղղութիւնից, նպատակասլացումից, ժամանակներից, հանգամանքներից եւ այլն։ ՀԱ-ի սկզբնական ուղղութիւնն ու նպատակները արտացոլուած են առաջին համարի էջ 1–3-ի «Յայտարարութեան» մէջ։ Սակայն կանխենք եւ ասենք, որ, ինչպէս սպասելի էր խելացի խմբագիրներից, ժամանակի ընթացքում դրանք փոփոխութեան են ենթարկուել, մասամբ աւելացել, բայց շատ աւելի նուազել են հանդէսի վերջնական նպատակների պահանջով, քանի որ հանրագիտարանային բնոյթից ՀԱ-ն հանգել է զուտ հայագիտականի։ Իական կէտերը հետեւեալներն են։

ՀԱ-ն հրատարակւում է ժամանակների պահանջին բաւարարութիւն տալու համար, փոխարինելով դադարած «Եւրոպա»-յին։ Հրատարակելիները լինելու են «բարոյական, ուսումնական, արուեստագիտական» բնոյթի, սակայն բազմազան։ Բարոյականին են վերաբերելու «դաստիարակչականը», «դպրոցական վարչութեան կամ մեթոդներու ընտրութիւնն ու բարեփոխութիւնները եւ այլն»։ Այս նպատակին են ծառայելու «նորավէպ, մանրավէպ եւ այլն զուարճալիքը»։ Ուստի ինչպէս տեսնում ենք, «բարոյականը» կրօնա-բարոյախօսական իմաստով չէ, եւ ՀԱ-ում որեւէ քարոզչական յօդուած լոյս չի տեսել։ Արդէն ՀԱ-ում պատճառաբանւում է, որ այն ժամանակ կաթողիկէ Հայերը մեծ մասամբ թրքախօս էին, ուստի հայատառ թուրքերէն թերթ պէտք էր. բացի այդ, Վիեննան շատ հեռու էր, եւ տեղական մամուլը միայն կարող էր հոգեւոր բնոյթի թերթ կամ հանդէս հրատարակել։

«Ուսումնականն է առաւելապէս՝ գիտնական աշխարհի ճշդագոյն հետազօտութեանց եւ նորագոյն տեսութեանց արդիւնքն եւ ազգային կամ օտարազգի գիտնական եւ բանասիրական երկասիրութիւնները հաղորդել» կամ դրանք ծանօթացնել գրախօսութիւններով եւ լոկ տեղեկութիւններով։

«Արուեստագիտական եւ անոր յարակից տնտեսական ճիւղին վերաբերեալներն են գլխաւորաբար մարդկային ճարտարութեան վերջին (նորագոյն) կատարելագործութեանց գիւտերը կամ փորձերը»։

Նիւթերի ցանկում՝ ուսումնական, արուեստագիտական, բարոյական։

ՀԱ-ն քաղաքական պարբերաթերթ չէ. բաւարարւում է 12 համարներից իւրաքանչիւրի վերջում տալով միայն «վերջին քաղաքական դիպաց եւ ընդհանուր քաղաքականութեան ներկայ դիրքն»։

Հանդէսը ամսական է, ամէն ամսուայ սկզբում 16 էջ։

Հանդէսը Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան պաշտօնական «օրգանն» է, խմբագրութեան կենտրոնատեղին Վիեննայի Մայր վանքն է, Vienne (Autriche), VII, Mechitaristengasse 4, որ մինչեւ այսօր աներեր է մնում։ Երկար ժամանակ «Հրատարակիչ ու պատասխանատու խմբագիր» եղել է Հ. Ռափայէլ Պարոնչը, անշուշտ կառավարութեան առաջ։

Առաջին հատորի «Ցանկ նիւթոց»-ն իր բաժանումներով եւ ենթաբաժանումներով գաղափար է տալիս բովանդակութեան մասին։ Այսպէս.

Ուսումնական. Ազգագրական, Բժշկական, Բանասիրական, Բանաստեղծական, Բնագիտական, Բնապատմական, Գրական, Դպրոցական, Լեզուաբանական, Հնախօսական, Մատենագրական (որ յաջորդ հատորում ճշտուեց՝ մատենախօսական), Պատմական, Քաղաքագիտական։

Արուեստագիտական. Արուեստական, Տնտեսական։

Բարոյական. Պատմական նորավէպ, Առակք եւ առածք։

Այլեւայլք. Նորալուրք, Տնտեսական, Մանրալուրք։

Քաղաքական տեսութիւն, Ցաւելուածք, Լրագրիս կողերու նիւթերն, որոնք առեւտրական ծանուցումներ եւ մի քանի տողանոց թղթակցութիւններ են։

Հատորների սկզբում ՀԱ-ի վաճառման եւ բաժանորդութեան գների, կէտերի եւ կենտրոնների վերաբերեալ տրուած «Ծանուցում»-ներից երեւում է, որ այն տարածուել է այն ժամանակ հայաբնակ բոլոր երկրներում[7]։

Առաջին հատորում իսկ հրատարակուել են շարունակելի երկար յօդուածներ եւ ամբողջական ուսումնասիրութիւններ, մինչեւ իսկ մի վէպ։

1888-ից սկսած՝ «Ուսումնական» բաժնի մէջ մտել է նաեւ «Իրաւագիտական»-ը, «Արուեստագիտական»-ի մէջ՝ «Տպագրական»-ը, իսկ 1899-ին՝ «Առեւտրական»-ը եւ այլն։

Ինչպէս նկատելի է, ՀԱ-ն (արեւմտահայերէն կամ արեւելահայերէն) սկսել է լոյս տեսնել հանրագիտարանային բովանդակութեամբ, եւ դա առաւելագոյնս օգտակար լինելու մտադրութեամբ, թէեւ առաջին իսկ համարում սկսել են լոյս տեսնել զուտ հայագիտական ծանրակշիռ եւ ցարդ չարժէքազրկուած հետազօտութիւններ, ինչպէս, օրինակ՝ «Պատմութիւն հայ լրագրութեան» (հեղինակ՝ Հ. Գր. Գալէմքեարեան), «Հետազօտութիւն նախնեաց ռամկօրէնի վրայ» (հեղինակ՝ Հ. Ղեւոնդ Ցովնանեան) եւ այլն։

Տարիների ընթացքում հայերէն «հանրամատչելի» օրաթերթերի եւ պարբերականների զարգացմամբ ՀԱ-ն աստիճանաբար եւ խելացիօրէն բեռնաթափուելով եւ զտուելով է՛լ աւելի է բարձրացել ու դարձել այն, ինչ որ է այժմ՝ անխառն հայագիտական բարձրամակարդակ եւ բովանդակալից

[6] ՀԱ-ն մէջբերել է 1887-ի մայիսի համարի սկզբում։

[7] Ուստի հերքւում է հետեւեալը. «Մխիթարեանների «Բազմավէպ» եւ «Հանդէս ամսօրեայ» պարբերականները, թէպէտեւ հեռու էին մնացել հայ կեանքի քաղաքական-հասարակական հարցերի արծարծումից, այնուամենայնիւ նրանց մուտքը Թուրքիա արգելուել է» («Հայ ժողովրդի պատմութիւն», հատ. Զ, Երեւան, 1981, էջ 881)։

© National Library of Armenia

հանդէս։ Այսպէս, 1890-ից սկսած՝ խմբագրութիւնը հրաժարուել է գեղարուեստական հատուածներից, 1897-ին՝ տնտեսականից, 1896-ին՝ արուեստագիտականից, 1902-ին՝ քաղաքական տեսութիւնից[8]։ 1908-ից դուրս են «Ազգային թերթերէ ծաղկեփունջ»-ը, որ սկիզբ էր առել 1896-ից, ինչպէս նաեւ «Ուսումնական» խորագիրը, այլ մնում են անցեալում նրա տակ մտնող որոշ բաժիններ եւ «Այլեւայլք»-ը։ ՀԱ-ն շատ շուտ դադարել է Հայերի կամ հայագիտութեան հետ չառնչուող հարցերի մասին գրելուց։ 1911-ի առաջին համարի սկզբում խմբագրութիւնը, Հ. Ներսէս Ակինեանի գլխաւորութեամբ, ՀԱ-ի 25-ամեակի առթիւ յայտարարել է. «Առաջիկայ 1911ին պիտի ըլլայ «Հանդէս Ամսօրեայի» ուղղութիւնը. Հայ անցեալ եւ ներկայ կեանքը ներկայացնել իւր սեպհական երանգներով։ Հայ քաղաքակրթութեան պատմութիւնն տալ ըստ հնոյն եւ ըստ նորոյս։ Հայ ազգային յարաբերութիւնքն ուրիշ ազգաց հետ հանել յերեւան։ Հայ արուեստին ինքնուրոյն նկարագիրն գծել ակներեւ։ Հայ անցեալ եւ ներկայ Գրականութիւնը հետազօտել եւ գնահատել քննութեամբ» եւ այլն։ Այս նոյն տարուանից եւրոպացի հայագէտներ իրենց մայրենի լեզուներով սկսում են աշխատակցել ՀԱ-ին. գերմաներէն առաջին յօդուածին հանդիպակաց ուղեկցում է հայերէն թարգմանութիւնը, սակայն այս սովորոյթ չի դառնում։ Հայ յօդուածագիրներ եւս մասնակցել են օտար լեզուներով։ Մեր օրերում հայերէն յօդուածների կամ այլ գրութիւնների վերնագրերը թարգմանւում են գերմաներէն։

ՀԱ-Ի ՄՆԱՅՈՒՆ ԳԱՆՁԵՐԸ

Իր հարիւրամեայ, շարունակուող գոյութեան ընթացքում ՀԱ-ն ստեղծել է տեսանելի, չօշափելի մշակութային գանձեր եւ անտեսանելիներ։ Առաջիններն են՝ ՀԱ-ի հատորները, դրանցից արտատպուած եւ «Ազգային մատենադարան» մատենաշարը կազմող հատորները, խմբագրութեան լոյս ընծայած յոբելեանական «Ցուշարձան» կոչուող, յօդուածների ժողովածուները։

Իրար յաջորդած տասնեակ հատորները ՀԱ-ն այսօր եւս մատչելի եւ օգտագործելի են դարձնում, հնարաւորութիւն տալիս կարդալու այն յօդուածները, ծաւալուն աշխատութիւնները, անաչառօրէն քննադատական գրախօսութիւնները, մատենագիտական ստոյգ ցանկերը[9], որոնք վերաբերում են մեր բանասիրութեան, հին ու նոր գրականութեան, լեզուաբանութեան, աշխարհագրութեան, պատմութեան, եկեղեցու պատմութեան, գաղթավայրերի, գեղարուեստին, ձեռագրերին եւ այլն։ Մեծավաստակների անունների եւ նրանց անմահ գործերի վերնագրերի լուսաւոր շարանը երկար է, եւ այստեղ օրինակներն անգամ շատ տեղ կը բռնէին, եւ ընտրութիւնն էլ գոհացուցիչ չէր լինի թէ՛ Մխիթարեանների եւ թէ՛ հեռաւոր Մոսկուայից սկսած աշխարհականների միջից[10]։

---

[8] ՀԱ-ի ջերմ ընթերցող եւ պաշտպան Հր. Աճառեանը գրել է խմբագիր Հ. Թովմաս Կէտիկեանին 1903-ի օգոստոսի 26-ին. «Շատ ուրախ եմ, որ Հանդէսին մէջէն ջնջած էք Քաղաքական տեսութիւնը» («Հրաչեայ Աճառեանի նամակները Վիեննայի Մխիթարեաններին», հրատ.՝ Մարտիրոս Մինասեան, «Բագին», Պէյրութ, 1985, փետրուար, էջ 71։ Եւ 1910-ի փետրուարի 2-ին՝ Հ. Ներսէս Ակինեանին. «Հանդէսի կողին վրայ այս անգամ հարց մը տրուած էր քաղաքական տեսութեան համար։ Մենք կը փափաքէինք որ Հանդէսը օրէ օր աւելի մեծնայ եւ ամբողջապէս նուիրուի հայագիտութեան, ուստի ոչ միայն իմ, այլ եւ մեր թեմական դպրոցին (որ բաժանորդ է) եւ մեր բոլոր ուսուցիչներուն կարծիքն է որ այդպիսի տեսութիւններ ի սպառ մուտք չգործեն Հանդէսի մէջ» (ն. տ. յունիս, էջ 66–67)։

[9] ՀԱ-ում 1888–1897 թթ. Հ. Գր. Գալէմքեարեանը հրատարակել է 1887–1896 թթ. լոյս տեսած «Եւրոպական-հայկական հրատարակութիւնք» մատենագիտական ցանկը, որ 1911-ի յունուարից ՀԱ-ում շարունակել է Հ. Պ. Ֆէրհաթեանը։ 1903-ին, երբ ցանկը դադարել էր, օգոստոսի 26-ին Հր. Աճառեանը Հ. Թովմաս Կէտիկեանին գրել է. «Ցաւալի է, որ Մատենախօսական բաժինը շատ ու շատ աղքատացած է։ Հայագիտական գրքերու վրայ գրեթէ ոչինչ կը գտնենք այժմ Հանդէսի մէջ [. . .] Մենք այստեղ միջոց չունինք գրքի մը մասին որեւէ տեղեկութիւն ունենալու. Հանդէսն է որ պիտի ծանօթացնէ։ Նոյնպէս Հանդէսն է որ պիտի գնահատէ. եւ ըստ իւր գնահատութեան՝ մենք ալ գիրքը պիտի առնենք կամ ոչ» («Բագին», 1895, փետրուար, էջ 71–72։

[10] Տե՛ս Հ. Վրթանէս Բունկուցեան, «Նիւթերու ցանկ Հանդէս Ամսօրեայ ուսումնաթերթի, Ա–ԻԵ տարիներու, 1887–1911», Վիեննա, 1912, Մխիթարեան տպարան (առանձնատիպ ՀԱ 1912-ից). ունի «Ցանկ Ա., Ցօդուածագիրներն եւ իրենց յօդուածները», որ լրիւ է, եւ «Ցանկ անուանց եւ նիւթոց», որի միայն Ա գիրն է լոյս տեսել։ Առաջին ցանկի շարունակութիւնն է Հ. Համազասպ Ոսկեանի «Ընդհանուր ցանկ Հանդէս Ամսօրեայ ամսաթերթի 50 տարիներու, ԻԶ–ՀԵ (1912–1961)», 28 էջ։

ՀԱ-ի մնայուն կտակներից են նաեւ դրանում առաջին համարից իսկ աստիճանաբար լոյս տեսած ընդարձակագոյն կարեւոր ուսումնասիրութիւններն անփոփող փոքր հատորները, որոնք կազմել են «Ազգային Մատենադարան»-ը, որոնց թիւը այսօր 228-ի հասնում։ Դրանք հայագիտական գրադարանների անհրաժեշտ մասունքներ են եւ առաւել եւս գնահատելի են այն հանգամանքի շնորհիւ, որ հեղինակներին հնարաւորութիւն է տրուել վերանայելու մի անգամ տպուածը ՀԱ-ում[11]։ Կարծում ենք, մասնագիտական այսպիսի մատենաշարի ստեղծման մէջ ՀԱ-ի խմբագրութիւնը միակն է հայագիտութեան ասպարէզում, եւ դա անչափ գնահատելի է։

Հայ եւ եւրոպացի, մի անգամ էլ միայն օտար հայագէտների հետազօտական յօդուածների թանկագին ստուար ժողովածուներ են յոբելեանական այն «Ցուշարձան»-ները, որ ՀԱ-ի խմբագրութիւնը հրատարակել է իր միջոցներով 1911-ին, 1927-ին, 1961 եւ 1976 թթ.։ Այս երեւոյթը եւս հազուադէպ է հայագիտութեան մէջ։

Հայագիտական որեւէ հարցի մասին գրել սկսելուց առաջ մարդ պէտք է այսօր տնտղի, թէ անցեալում ի՞նչ է ասուել այդ մասին. նրա որոնման դաշտերից պիտի լինեն նաեւ ՀԱ-ն, նրա «Ազգային Մատենադարան»-ը եւ «Ցուշարձան»-ները, որոնք բազմաբնոյթ եւ հեղինակալից են։

ՀԱ-ն ունի անտեսանելի արժանիքներ եւ երախտիք։ Ապրելով կենտրոնական Եւրոպայում, յաճախելով աւստրիական համալսարանական բաժիններ, ընթերցելով եւրոպական մասնագիտական գրականութիւն՝ Վիեննայի Մխիթարեանները տիրապետել են գիտաքննադատական ոգուն եւ դրանով կշռադատել իրենց ուսումնասիրած նիւթերը, հրաժարուելով ազգային աւանդութիւններից եւ միամիտ «ազգասիրութիւնից», երկիւղածութեամբ հաւատ ընծայելուց իրենց կարդացածներին։ Այդ առողջ ոգով են հայագիտութիւն մշակել։ Դրա շնորհիւ են, օրինակ, յայտնաբերել հայ լեզուաբանութեան գեղեցկագոյն եւ կարեւորագոյն գիւտը՝ բուն դասական գրաբարի գոյութիւնը հին հայերէնի կամ գրաբարի մէջ, 1837–1840 թթ.[12]։ Այդ ոգով աշխատեցին ՀԱ-ում եւ ընդհանրապէս Վիեննայի Մխիթարեան շրջանակում։ Արդ, կարելի՞ է կասկածել, որ հանդէսի ընթերցողները, առաւել եւս աշխատակիցները, միւս հայագէտները նրանցից օրինակ չվերցրին եւ նրանց չհետեւեցին։ Հայ քննադատական առողջ եւ անկաշկանդ ստեղծարար միտքը շատ բանով է պարտական ՀԱ-ին եւ առ հասարակ վիեննական Մխիթարեան հայագէտներին։ Հաւանաբար շատերը սովորեցին գիտական յօդուած գրել, գիրք շարադրել բանասիրական ոճով եւ ձերբազատուել «վարդապետն ասաց» պատգամներից։

ՀԱ-ի արժանիքներից է նաեւ արեւմտահայերէնի մշակումը, զտումը, հարստացումը, մասնագիտացումը դրանում. հեղինակներն աստիճանաբար ազատուել են գրաբարեան հոլովաձեւերից եւ դարձուածքներից։

Փորձը մեզ ցոյց է տուել, որ հետեւեալ երկու ցանկերը կարող են օգտակար լինել այլեւայլ նպատակներով։

ՀԱ-ի խմբագիրները

1. Հ. Ղեւոնդ Ցովնանեան, 1887–1889։
2. Հ. Յակոբոս Տաշեան, 1890–1895։
3. Հ. Գրիգորիս Գալէմքեարեան, 1895–1898։
4. Հ. Վարդան Մելքիսեդեկեան, 1898–1901։
5. Հ. Թովմաս Կէտիկեան, 1901–1906 սեպ.։
6. Հ. Հմայեակ Համբարեան, 1906 սեպ. – 1909 սեպ.։

---

[11] «Ազգային Մատենադարան»-ի ցանկը տե՛ս «Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի», Վիեննա, Մխիթարեան տպարան, 1972, ուր 216 վերնագիր կայ։

[12] Տե՛ս Հ. Ներսէս Ակինեան, Դասական հայերէնը եւ վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932։ Յայտնի է, որ Անտուա Մեյէի եւ Հր. Աճառեանի պէս հսկաներ անվերապահօրէն ընդունեցին դասական հայերէնի գիւտը եւ գիտականօրէն կիրառեցին սկզբունքը։

© National Library of Armenia

7. Հ. Ներսէս Ակինեան, 1909 սեպ. – 1913։
8. Հ. Աղեքսանդր Մատիկեան, 1913–1920։
9. Հ. Համազասպ Ոսկեան եւ Հ. Արիստակէս Վարդանեան 1924–1930։
10. Հ. Ներսէս Ակինեան, 1920–1937։
11. Հ. Հ. Ոսկեան, 1938–1946։
12. Հ. Ն. Ակինեան, 1946–1963։
13. Հ. Հ. Ոսկեան, 1963–1968։
14. Հ. Պետրոս Տէր-Պողոսեան, 1968–1980։
15. Հ. Օգոստինոս Սեքուլեան, 1981–1983։
16. Հ. Մեսրոպ Թոփալեան, 1984–1987։

ՀԱ-ի հատորների տարիները

Ա	1887	ԻԶ	1912	ԾԱ	1937	ՀԶ	1962
Բ	1888	ԻԷ	1913	ԾԲ	1938	ՀԷ	1963
Գ	1889	ԻԸ	1914	ԾԳ	1939	ՀԸ	1964
Դ	1890	ԻԸ	1915	ԾԴ	1940	ՀԹ	1965
Ե	1891	Լ	1916	ԾԵ	1941	Զ	1966
Զ	1892	ԼԱ	1917	ԾԶ	1942	ԶԱ	1967
Է	1893	ԼԲ	1918	ԾԷ	1943	ԶԲ	1968
Ը	1894	ԼԳ	1919	ԾԸ	1944	ԶԳ	1969
Թ	1895	ԼԴ	1920	ԾԹ	1945	ԶԴ	1970
Ժ	1896	ԼԵ	1921	Կ	1946	ԶԵ	1971
ԺԱ	1897	ԼԶ	1922	ԿԱ	1947	ԶԶ	1972
ԺԲ	1898	ԼԷ	1923	ԿԲ	1948	ԶԷ	1973
ԺԳ	1899	ԼԸ	1924	ԿԳ	1949	ԶԸ	1974
ԺԴ	1900	ԼԹ	1925	ԿԴ	1950	ԶԹ	1975
ԺԵ	1901	Խ	1926	ԿԵ	1951	Ղ	1976
ԺԶ	1902	ԽԱ	1927	ԿԶ	1952	ՂԱ	1977
ԺԷ	1903	ԽԲ	1928	ԿԷ	1953	ՂԲ	1978
ԺԸ	1904	ԽԳ	1929	ԿԸ	1954	ՂԳ	1979
ԺԹ	1905	ԽԴ	1930	ԿԹ	1955	ՂԴ	1980
Ի	1906	ԽԵ	1931	Հ	1956	ՂԵ	1981
ԻԱ	1907	ԽԶ	1932	ՀԱ	1957	ՂԶ	1982
ԻԲ	1908	ԽԷ	1933	ՀԲ	1958	ՂԷ	1983
ԻԳ	1909	ԽԸ	1934	ՀԳ	1959	ՂԸ	1984
ԻԴ	1910	ԽԹ	1935	ՀԴ	1960	ՂԹ	1985
ԻԵ	1911	Ծ	1936	ՀԵ	1961	Ճ	1986

ՀԱ-ի յարգի, արժանիքների, արդիւնքների եւ այլ յատկութիւնների մասին դրուատական շատ խօսքեր են գրուել ու ասուել. բաւարարում ենք հետեւեալներով, որովհետեւ նուազ ծանօթ են։

Հ. Աճառեանը, նախանձախնդիր ՀԱ-ի գիտական որակին, Հ. Թովմաս Կէտիկեանին գրել է 1904-ի ապրիլի 2-ին. «Տէր մի՛ արասցէ որ Հանդէսի մէջ ալ «ժողովրդական թերթի» կամ «ապաւաթունի» յօդուածներու ձգտումներ տեսնուին. այն ժամանակ վա՜յ հայագիտութեան»[13]։

Նոյնը՝ Երեւանից 1928-ի դեկտեմբերի 26-ին ՀԱ-ի խմբագրութեանը. «Մէկ տարիէն աւելի է որ Հանդէս ստացած չեմ. եւ ասիկա մտաւոր որբութիւն է մեզ համար, որովհետեւ միակ ուսումնաթերթը Հանդէսն է»[14]։

[13] «Բագին», 1985, ապրիլ, էջ 75–76։
[14] Ն. տ., նոյեմբեր, էջ 77։

Ֆրանսիացի ականաւոր հայագէտ Անտուան Մեյէն Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 100-ամեակի եւ ՀԱ-ի 25-ամեակի առթիւ հրատարակուած «Ցուշարձան»-ի գրախօսութեան մէջ ասել է. «1887 թ. նրանց (վիեննական Մխիթարեանների. Մ. Մ.) հիմնադրած հանդէսը երբեք չի դադարել եւրոպական գիտութեան եւ բուն հայ բանասիրութեան միջեւ միջակայ օղակի դերը կատարելուց։ Հրապարակելով իրենց տպագրած այս յուշարձանային մեծ հատորը՝ նրանք կարող են օրինական հպարտութեամբ նայել իրենց գործունէութեան վրայ»[15]։

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
ԺՆԵՒԻ համալսարան

[15] *Անտուան Մեյէ, Հայագիտական ուսումնասիրութիւններ, կազմող, թարգմանող եւ ծանօթագրող՝ Մարտիրոս Մինասեան, Երեւան, 1978, էջ 603։*

© National Library of Armenia